

կ'ըսեն անոնք, բաժնուած է երկու անհաշտ, հակամարտ բանակներու՝ կապիտալի եւ աշխատանքի կամ իմպերիալիզմի եւ կոմունիզմի: Միմիայն կոմունիզմի, կամ, բոլշեւիկներու ըսելով, պրոլետարիատի յաղթանակով եւ տիրապետութեամբ կարելի է վերջ տալ համաշխարհային տնտեսական, ընկերային եւ քաղաքական տագնապին:

Պէտք է ոտքի հանել բոլոր երկիրներու պրոլետարիատը, ամէն տեղ զինու գորութեամբ տապալել գոյութիւն ունեցող կառավարութիւնները, հաստատել բանուոր դասի ղեկատարը, եւ բռնի ուժով իրադրծել համայնատիրական կարգերը:

Բոլշեւիկեան այս պարզունակ ծրագրի իրականացման համար Մոսկուայի մէջ ստեղծուեցաւ «միջազգային» մարմին մը, որ «Երրորդ Միջազգայնականի» անունը կը կրէ անիրաւ կերպով եւ որ փաստօրէն ուսու բոլշեւիկներու Կ. Կոմիտէի հլու կամակատարն է:

«Երրորդ Միջազգայնականը» իր տիրոջ մէջն առատ միջոցներ կը ստանայ՝ աշխարհի չորս կողմը խտովութիւններ յարուցանելու, ժողովուրդները իրենց իշխանութեանց դէմ գրգռելու, ամէն տեղ տնտեսական կեանքը աւելի եւս քայքայելու, բանուորութիւնը պառակտելու, անբարոյականացնելու, անգործութեան մատնելու նպատակով: Եւ այս բոլորը անոր համար, որ դժգոհներու թիւը աւելնայ եւ ժողովրդական զանգուածները տարբերայնօրէն մղուին դէպի ապստամբութիւն յանուն «կոմունիզմի»:

«Երրորդ Միջազգայնականը» այսպիսով կը ներկայացնէ իրօք ուսական մարմին մը, որ կոչուած է ամբողջ աշխարհի մէջ հրահրելու «համաշխարհային յեղափոխութիւն» այնպէս, ինչպէս եղաւ Ռուսիոյ մէջ: Որովհետեւ ուսու բոլշեւիկները համոզուած են, որ իրենց դիրքը Ռուսիոյ մէջ չպիտի կարողանան երկարօրէն պահպանել, եթէ ուրիշ երկիրներու մէջ եւս չհաստատուի իրենց դադափարական հնոցէն դուրս եկած եւ իրենց կատարեալ վըստահութիւնը վայելող մարդոց «խորհրդային» իշխանութիւնը: Այս պատճառով ալ այդ նպատակի համար անոնք չեն խնայեր ոչինչ եւ հակայական գումարներ կը վատնեն արտասահմանեան իրենց «պրոպագանդին» համար:

Սակայն բոլշեւիկներու հինգ տարուան «յեղափոխական» փորձը ոչ միայն Ռուսիոյ, այլ եւ ուրիշ երրօրական կամ ամերիկեան երկիրներու մէջ ցոյց տուաւ, թէ մարդկութիւնը, փոխանակ հետզհետէ մօտենալու, միշտ աւելի ու աւելի կը հեռանայ «համաշխարհային յեղափոխութիւն» ըսուածէն, եթէ այդ խօսքի տակ հասկնանք շարժում մը, որ բռնի ուժով պիտի հաստատէ ընկերվարական համայնականարգը:

Բոլշեւիզմի մայր երկրի՝ Ռուսիոյ մէջ իսկ «համաշխարհային յեղափոխութեան» ռահվիրաները փաստօրէն արդէն հրաժարած են իրենց հիմնական շատ մը սկզբունքներէն ու դադափարներէն եւ, իրերու երկաթէ հարկադրանքին տակ, կը նահանջեն քայլ առ քայլ, տեղի տալով դրամատիրական տնտեսութեան անյաղթելի պահանջներուն առջեւ: Ռուսիոյ «կոմունիզմը» կամ «ընկերվարութիւնը» արդէն վերածուած է, գործածելով Լենինի սիրած խօսքը, «պետական կապիտալիզմի», որը իր կարգին օր մը անտարակոյս պիտի վերածուի իր բնական տարրքին, — այսինքն՝ մասնաւոր կապիտալիզմին: Ատոր ապացոյց՝ այն պերճախօս զիջումները, զորս ըրին վերջերս բոլշեւիկները անգլիական խոչոր դրամատիրական մասնաւոր ընկերութեան մը՝ շահագործելու համար ուսական հարստութիւնները: Այն, ինչ որ անոնք չուզեցին զիջիլ ձենովայի եւ Լահէյի քոնֆերանսներուն մէջ, կը զիջին այժմ մասնաւոր օտար դրամատէրներուն:

Ճիշդ է ներքին եւ արտաքին նկատումներով բոլշեւիկները չեղեալ նկատեցին անգլիական ընկերութեան իրենց տուած զիջումները, սակայն այս ըրին ոչ թէ տնտեսական, այլ քաղաքական հաշիւներով:

Եւ տարակոյս չի կայ, որ վաղը անոնք նորէն պիտի ընեն նոյն եւ մինչեւ իսկ աւելի մեծ զիջումներ օտար բուրժուազիային. որովհետեւ նախանշը տնտեսական անբաժեւտութիւն է, որմէ չեն կարող խուսափիլ:

Նուազ կարեւոր չեն բոլշեւիկներու կողմէ ուսու բուրժուազիային տրուած զիջումները: Բոլշեւիկները ստիպուած եղան հաշտուիլ եւ ուսու բուրժուազիայի գոյութեան եւ գործունէութեան հետ: Անդամ կարլ Ռատեքի պէս